ԼՈՌԻԱՅԻ ՉԱՐԱՖԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԳԱՀ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Դեկտեմբերի 2016 թ

ք. Ստեփանակերտ

№ 1-06/16

Հայաստանի Հանրապետության
Սահմանադրական դատարանի նախագահ
պարոն Գագիկ Հարությունյանին

Հարգարժան պարոն Հարությունյան,

Արցախի ժողովրդի, իշխանությունների եւ անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 20-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի՝ որպես երկրի Մայր օրենքի գերակայությունը եւ անմիջական գործողությունն ապահովող, մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները պաշտպանող մարմնի ստեղծման անհրաժեշտությունը հաստատվեց այս 20 տարիների ընթացքում:

Իր կազմավորման օրից դատարանը, լինելով սահմանադրական արդարադատություն իրականացնող միակ կառույցը, աշխատանքներ է տանում երկրում սահմանադրականություն հաստատելու, քաղաքացիական հասարակություն ու իրավական մշակույթ ձեւավորելու ուղղությամբ եւ, համագործակցելով աշխարհի տարբեր հեղինակավոր իրավական ինստիտուտների հետ, իր ներդրումն է ունենում պետության օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու գործում:

Մեկ անգամ եւս շնորհավորում եմ Ձեզ եւ Սահմանադրական դատարանի աշխատակիցներին՝ հիշարժան տարեդարձի առթիվ: Մաղթում եմ խաղաղություն, քաջառողջություն, մասնագիտական նորանոր ձեռքբերումներ եւ հաջողություններ՝ ի փառս Հայաստանի Հանրապետության եւ մեր ժողովրդի:

Խորին հարգանքով՝

ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ